

Ք. Երևան

26.07.2013թ.

ՕՐԱԿԱՐԳ

**Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման
խորհրդի նիստի**

**Հարց 1. ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի N 952-Ն որոշման կատարման
ընթացիկ հաշվետվություն**

Ձեկուցող՝ Արտեմ Ասատրյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

- համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնների ընթացիկ գործարկման, ինչպես նաև ամբողջական գործարկման անհրաժեշտ պայմանների մասին.
- հանրապետության մնացած տարածաշրջաններում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների տեղակայման համար անհրաժեշտ շենքեր (շինություններ) տրամադրելու խնդիրների մասին.
- «ՀՀ կառավարության 2012թ. հուլիսի 26-ի N 952-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մասին.
- «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N N 941-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագծի մասին
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման (փոխառություն թիվ 7848 ԱՄ) շրջանակներում իրականացված աշխատանքների և նոր ծրագրի կանխավճարի մասին

**Հարց 2. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի
ֆինանսավորման մոդելի նախագիծ**

Ձեկուցող՝ Արտեմ Ասատրյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

Ընթացիկ հարցեր

Օրակարգի 1-ին հարցի 1)-ին ենթակետ

Համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնները տեղակայված են Երևանում (5 կենտրոն, 1 միասնական ընդունարան), հանրապետության ՀՀ Արարատի (4 կենտրոն), Արմավիրի (2 կենտրոն), Կոտայքի (2 կենտրոն), Գեղարքունիքի (2 կենտրոն), Տավուշի (1 կենտրոն) և Շիրակի (2 կենտրոն) մարզերում:

Գործարկվում են նշված 19 կենտրոններից 6-ը, շինարարական աշխատանքներն ավարտվել են բոլոր 19-ում, ընթացքի մեջ են համակարգչային ցանցի անցկացման, համակարգչային տեխնիկայի և կահույքի տրամադրման աշխատանքները, կոմունալ ծառայությունների (էլեկտրաէներգիա, ջուր, բնական գազ) արտաքին միացումներն ավարտված են, սակայն դրանց մատակարարման պայմանագրերը դեռևս կնքված չեն («Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան կազմված օրինակելի պայմանագրերի և Հանրային ծառայությունների հանձնաժողովի կողմից հավանության արժանացած օրինակելի պայմանագրերի միջև առկա են տարբերություններ):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամաններով ձևավորվել են համալիր սոցիալական ծառայությունների Արտաշատի, Վեդու, Մասիսի, Արարատի, Բաղրամյանի, Արմավիրի, Վարդենիսի, Ճամբարակի, Չարենցավանի, Նաիրիի, Մարալիկի, Աշոցքի, Նոյեմբերյանի, Աջափնյակի, Ավանի, Էրեբունու, Դավթաշենի, Նորք-Մարաշի և Նուբարաշենի տարածքային 19 կենտրոնները, նշանակվել են համակարգողները:

Շարունակվում են ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը կարգավորող իրավական ակտերի մշակման աշխատանքները: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 8 հրամաններով հաստատվել են ՀՄԾԿ գործարկման համար անհրաժեշտ մեթոդական փաստաթղթերը:

ՀՀ կառավարության քննարկման են ներկայացվել «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին» և «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքների նախագծերը (նոր խմբագրությամբ), որոնք ապահովում են ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ամբողջական ներդրման իրավական հենքը, դրամական վճարների կազմակերպման լիազորությունների՝ մեկ պետական մարմնին վերապահելը:

Սակայն հաշվի առնելով, որ առաջարկվում է երկարացնել փորձնական ծրագրի իրականացման ժամանակահատվածը (2013թ. հոկտեմբերի 31), նպատակահարմար է վերոհիշյալ օրենքների նախագծերը ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնել փորձնական ծրագիրն ավարտելուց հետո (2013թ. նոյեմբեր) փաթեթով, դրանք լրամշակելով փորձնական ծրագրի արդյունքների հիման վրա:

Կազմակերպվել են 19 ՀՄԾՏԿ-ների, շուրջ 400 աշխատողների վերապատրաստման սասընթացներ:

Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների ամբողջական գործարկման համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական պայմանների ձևավորման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վերանորոգված, վերազինված, նոր շինություն տեղափոխված ՀՄՏԿ-ների պահպանման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ է դրանցից յուրաքանչյուրի համար պահպանության ծառայություն (պահակներ), սանիտարական նորմերի պահպանում (հավաքարար), տնտեսական սպասարկումն ապահովելու նպատակով՝ տնտեսվար և այլն:

Ներկայացվում է 19 ՀՄՏԿ-ների՝ վերոհիշյալ ծառայությունների ապահովման համար, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները:

Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների անվտանգության ապահովման խնդրի լուծման նպատակով դիտվարկվել է երեք հնարավոր տարբերակ՝

1-ին տարբերակ Պետական պահպանության գլխավոր վարչության (ՊՊԳՎ) կողմից ՀՄՏԿ-ների կենտրոնացված պահպանություն՝ դիտակետերի միջոցով:

1) ՊՊԳՎ-ն պահպանության ծառայություն կարող է տրամադրել միայն տեղադրված անվտանգության ազդանշանային համակարգի միջոցով:

2) Անվտանգության ազդանշանային համակարգի տեղադրումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից:

Նախնական ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր ծախսը կազմում է 18,9 մլն դրամ (մեկանգամյա կապիտալ ներդրում):

3) ՊՊԳՎ-ի կողմից ներկայացված սակագներով՝ անվտանգության ահազանգային համակարգի (կենտրոնացված պահպանության դիտակետերի միջոցով պահպանության իրականացում) միջոցով 18 ՀՄՏԿ-ների (ՊՊԳՎ-ն ճամբարակում համապատասխան ծառայություն չունի) պահպանության ծառայության տրամադրման ձեռք բերման համար անհրաժեշտ է տարեկան 15,8 մլն դրամ:

2-րդ տարբերակ ՊՊԳՎ-ի կողմից պահակակետի սպասարկումն՝ ըստ պահպանություն իրականացնող աշխատողների, 19 կենտրոնների համար կազմում է տարեկան 191,3 մլն դրամ (19 կենտրոն x 12 ամիս x 839000 դրամ՝ մեկ պահակակետ):

3-րդ տարբերակ՝ ՀՄՏԿ-ում պահակային ծառայության ապահովում

19 ՀՄՏԿ-ներից յուրաքանչյուր կենտրոնում մեկ պահակակետ (շուրջօրյա պահակային ծառայություն) ունենալու դեպքում ՀՀ պետական բյուջեից անհրաժեշտ կլինի տարեկան 85,6 մլն դրամ:

1) Մեկ պահակակետի համար հաստիքների թիվը կազմում է 4,76

2) 2014 թվականի համար ամսական նվազագույն աշխատավարձի չափ է նախատեսվում 66140 դրամ,

3) Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվում է 13 ամիսների համար և 1.1 գործակցով՝ չնախատեսված լրացուցիչ ծախսեր:

Այսպիսով 19 ՀՄԾՏԿ-ների պահակային ծառայության համար անհրաժեշտ է
 $19 \times 4.76 \times 66140 \times 13 \times 1.1 = 85,6$ մլն դրամ

Ներկայացված հաշվարկները մոտավոր են:

ՀՄԾՏԿ կանոնադրական խնդիրների իրականացման կարևորագույն ուղղությունը բնակչության հետ տարվող աշխատանքն է, մասնավորապես սոցիալական կարիքների գնահատումը, դրանց հիման վրա անհատական սոցիալական ծրագրի մշակումը, դրա իրականացումը, ընթացքի մոնիթորինգը և արդյունքների գնահատումը:

Նշված գործընթացն իրականացվում է տնային այցելություն կատարելու և սոցիալական դեպքի վարման հրահանգների համաձայն:

Սոցիալապես անապահով ընտանիքի հետ սոցիալական դեպքի վարման մեթոդաբանությամբ աշխատանքը կազմակերպելիս ակտիվ շրջանը՝ սոցիալական կարիքների ամբողջական և խորը գնահատում և անհատական սոցիալական ծրագրի կազմում, տևում է միջինում մեկ ամիս, որի ընթացքում կատարվող տնային այցելությունների միջին թիվը կազմում է շուրջ՝ 3, իսկ առավել բարդ դեպքերի համար՝ 5: Միաժամանակ այդ դեպքերի համար շարունակական վերահսկողություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է միջինում տարվա ընթացքում ևս 2 տնային այցելություն (ներքին գործուղումներ՝ ՀՄԾՏԿ տեղակայման կենտրոնից սպասարկման տարածքի համայնքներ): Նախատեսվում է նաև կենտրոնների աշխատողների գործուղում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ տարեկան 18 անգամ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կանոնադրական խնդիրների մեջ է մտնում տնային այցելություն կատարելը՝ դիմող քաղաքացու ընտանիքը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառելու դեպքում (25 օրյա ժամկետում), որը կատարվում է թերի համապատասխան ֆինանսական միջոցների (ներքին գործուղում կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում) անբավարար լինելու (չլինելու) պատճառով:

Ներկայումս ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվել են 127,5 հազար ընտանիք (քաղաքային բնակավայրերում՝ 76808 ընտանիք, գյուղական բնակավայրերում՝ 50702 ընտանիք), որոնց տնային այցելություն կատարելու համար անհրաժեշտ է 40,7 մլն դրամ դրամ: Հաշվարկները կատարվել են ելնելով՝ քաղաքային բնակավայրերում երկու կողմը 200 դրամ, իսկ գյուղական բնակավայրերում՝ երկու կողմը 500 դրամ, հաշվարկից:

Աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ են նաև գրասենյակային տարբեր պարագաներ, որոնք նախատեսվել են մեկ աշխատողին տրամադրվելիք փաթեթի տեսքով, հաշվարկվել է մեկ միավորի (փաթեթի) արժեքը:

Կից ներկայացվում են հաշվարկները:

Օրակարգի 1-ին հարցի 2)-րդ ենթակետ

ՀԲ աջակցությամբ իրականացված ծրագրի շրջանակներում աշխատանքներն ավարտվել են 19 տարածաշրջաններում, դեռևս 35 նմանատիպ կենտրոնների, դրանցից 2-ում 2-ական միասնական ընդունարանով, վերանորոգման, դրանց կահավորման և տեխնիկայով զինման անհրաժեշտություն կա:

Նշված 35 տարածաշրջաններից

2-ում սոցիալական պաշտպանության ոլորտում գործող 3 կառույցները վերանորոգված են, դրանցից 2-ում միասնական ընդունարանի հարց լուծված չէ, 10-ում արվել են որոշ առաջարկություններ, սակայն դրանք չեն համապատասխանել ՀՄԾՏԿ պահանջներին.

6-ի համար ընդունվել են ՀՀ կառավարության որոշումներ, սակայն 3-ում առկա են որոշ խնդիրներ

2-ում (Երևան) լուծվել է միայն միասնական ընդունարանի հարցը

6-ում առկա են ավագանու որոշումներ

9-ում որևէ առաջարկություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների շենքային պայմանների մասին

հ.հ	տարածք	Ծանոթություն
1	Վաղարշապատ	որևէ առաջարկություն չկա
2	Աշտարակ	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում
3	Ապարան	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում
4	Ծաղկահովիտ	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում
5	Թալին	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում
6	Գավառ	առաջարկ եղել է Գավառ Դ. Դեմիրճյանի 32 հասցեում գտնվող դպրոցի տարածքում, որը նպատակահարմար չէ ՀՄԾՏԿ տեղակայելու համար Առաջարկվում է քննարկել նախկին մանկապարտեզի շենքում տեղակայելու հարցը (շենքի մի մասում տեղակայված է Եվրոպական համալսարանը), համայնքային սեփականություն է
7	Սևան	որևէ առաջարկություն չկա
8	Մարտունի	ՍՊ 3 տարածքային մարմինները գտնվում են քաղաքապետարանի շենքում և վերանորոգված են, սակայն միասնական ընդունարանի համար առաջարկվող տարածքը բավարար չէ Հիվանդանոցի առաջին հարկում առկա է չօգտագործվող տարածք, քննարկել այնտեղ ՀՄԾՏԿ-ի տեղակայման հարցը.

9	Թումանյան	առաջարկված տարածքը՝ նախկին ծննդատան շենքից, նպատակահարմար չէ, գտնվում է քաղաքի ծայրամասում և հասանելի չէ բնակչության համար (գործող տրանսպորտային երթուղի չկա)
10	Վանաձոր	կա տարածքի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում (704)
11	Տաշիր	առաջարկված տարածքը նպատակահարմար չէ, քանի որ տարածքի վերանորոգման ծախսերը մեծ են (բանակցություններ են իրականացվել սոցիալական ներդրումների հիմնադրամի հետ, անհրաժեշտ է շուրջ 200 մլն դրամ)
12	Սպիտակ	առաջարկվել էր տարածք, որն արդեն ունի այլ օգտագործող (սեփականատեր)
13	Ստեփանավան	ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծը շրջանառությունից հանվել է՝ հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ Լոռու մարզպետի գրությունները, այլ առաջարկություններ չկան
14	Աբովյան	որևէ առաջարկություն չկա
15	Հրազդան	առաջարկված տարածքն ամրացված էր ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմին, Հրազդանի քաղաքապետը նախնական համաձայնություն է տվել Հրազդան, Միկրոշրջան 13փ. 24 շենք, հասցեում գտնվող N18 նախադպրոցական հիմնարկի տրամադրման համար (4605 քառ.մ, 3 մասնաշենք)
16	Արթիկ	ՀՀ ԿՈ N704-Ն առ 24.05.2012թ. Արթիկ քաղաքի Բաղրամյան 19 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի 568 քառակուսի մետր տարածքը հատկացված է, սակայն հատկացված շինությունն ունի լուրջ ամրացման կարիք
17	Ամասիա	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում, սակայն համապատասխան տարածքը վթարային է
18	Ախուրյան	կա տարածքի վերաբերյալ ավագանու որոշում
19	Գյումրի 2 միասնական ընդունարանով	ՀՀ ԿՈ N704-Ն առ 24.05.2012թ. Գյումրի քաղաք Ղանդիլյան 51/11 հասցեում գտնվող շենքի 940 քառ.մ, որը բավարար չէ: Քննարկվում է Սամարիտեր կամ Գյուլբենքյան հիվանդանոցներից տարածք հատկացնելու հարցը
20	Գորիս	2013-2014թթ. ուս. տարվա ավարտից հետո կտրամադրվի համապատասխան տարածք՝ վերակազմակերպվող հատուկ դպրոցի շենքից
21	Կապան	որևէ առաջարկություն չկա
22	Մեղրի	անհրաժեշտ տարածքի մի հատվածի վերաբերյալ պետք է լինի Մեղրու ավագանու որոշում, որն առայժմ չկա
23	Սիսիան	Առկա է Սիսիանի ավագանու որոշում, որ կտրամադրվի համապատասխան տարածք՝ փոխարենը նույն չափի այլ

		պետական գույք (ՀՀ ԿԳՆ-ի հաշվեկշռին պատկանող) հանդիսացող տարածք ստանալուց հետո
24	Դիլիջան	որևէ առաջարկություն չկա
25	Իջևան	որևէ առաջարկություն չկա
26	Բերդ	որևէ առաջարկություն չկա
27	Ջերմուկ	ՀԲ-ի կողմից վերանորոգված տարածք է, սակայն չկա միասնական ընդունարանի համար հարմար տարածք
28	Վայք	որևէ առաջարկություն չկա
29	Եղեգնաձոր	տարածք հատկացված է, սակայն «Ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը դեռևս վիճարկում է ՀՀ կառավարության համապատասխան որոշումը
30	Արաբկիր	կա տարածքի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում (1681), համապատասխան տարածքի հանձնման-ընդունման աշխատանքները դեռևս ավարտված չեն
31	Կենտրոն 2 միասնական ընդունարանով	որևէ առաջարկություն չկա
32	Մալաթիա- Սեբաստիա	կա տարածքի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում (1456)
33	Նոր Նորք	առաջարկված տարածքը դպրոցի տարածք էր, որը հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների միակ մասնագիտացված դպրոցն է հանրապետությունում, նոր տարածք չի առաջարկվել
34	Շենգավիթ	կա տարածքի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշում (1456)
35	Քանաքեռ- Զեյթուն	Առկա է Երևանի ավագանու որոշում, տրամադրվել է տարածք միայն միասնական ընդունարանի համար, ցանկալի է խնդրի ամբողջական լուծում
36	Էրեբունի	Լուծվել է միայն միասնական ընդունարանի հարցը, ՍԾՏԳ, ՁՏԿ և ՍԱՊԾ ՏԿ գտնվում են տարբեր շինություններում
37	Արարատ	աշխատանքներն ավարտված են
38	Արտաշատ	աշխատանքներն ավարտված են
39	Վեդի	աշխատանքներն ավարտված են
40	Մասիս	աշխատանքներն ավարտված են
41	Արմավիր	աշխատանքներն ավարտված են
42	Բաղրամյան	աշխատանքներն ավարտված են
43	Վարդենիս	աշխատանքներն ավարտված են
44	Ճամբարակ	աշխատանքներն ավարտված են
45	Չարենցավան	աշխատանքներն ավարտված են
46	Եղվարդ	աշխատանքներն ավարտված են
47	Մարալիկ	աշխատանքներն ավարտված են

48	Աշոցք	աշխատանքներն ավարտված են
49	Նոյեմբերյան	աշխատանքներն ավարտված են
50	Աջափնյակ	աշխատանքներն ավարտված են
51	Ավան	աշխատանքներն ավարտված են
52	Դավթաշեն	աշխատանքներն ավարտված են
53	Նորք Մարաշ	աշխատանքներն ավարտված են
54	Նուբարաշեն	աշխատանքներն ավարտված են

Օրակարգի 1-ին հարցի 3)-րդ ենթակետ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

_____ 2013 թվականի N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 26-Ի N 952-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» N952-ն որոշման 3-րդ կետի 3)-րդ ենթակետում «հոկտեմբերի 1-ը» բառերը փոխարինել «նոյեմբերի 30-ը» բառերով, իսկ N2 հավելվածի 3-րդ կետում «մայիսի» բառը փոխարինել «հոկտեմբերի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

Օրակարգի 1-ին հարցի 4)-րդ ենթակետ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ
ՈՐՈՇՈՒՄ**

_____ 2013 թվականի N

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի N941-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի N «Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման կառավարման խորհուրդ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 941-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման N 1 հավելվածի «Վ. Գաբրիելյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար» բառերը փոխարինել «Դ. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար» բառերը.

2) որոշման N1 հավելվածը լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝ «Վ. Գաբրիելյան - Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար».

3) որոշման 2-րդ հավելվածի 4-րդ կետի «եռամսյակը» բառը փոխարինել «կիսամյակը» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Օրակարգի 1-ին հարցի 5)-րդ ենթակետ

Հայաստանում համալիր սոցիալական ծառայությունների (այսուհետ՝ ՀՄԾ) համակարգի ներդրումը հանդիսացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ 2010-2013թթ Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում իրականացված աշխատանքների առանցքային ուղղությունը: Ծրագրի շրջանակներում ծախսված և պարտավորությունների մասով ընդհանուր գումարը կազմում է **5,689,634.37 ԱՄՆ դոլարին** համարժեք դրամ գումար, որից **4,852,560.08 ԱՄՆ դոլարին** համարժեք դրամ գումարը՝ ՀԲ փոխառության միջոցներից, իսկ **837,074.28 ԱՄՆ դոլարին** համարժեք դրամ գումարը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներից:

Ծրագրի շրջանակներում նշված ընդհանուր գումարի **70.5 տոկոսն ուղակիորեն ծախսվել է Համալիր սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման միջոցառումների իրականացման համար՝** աշխատանքների, ապրանքների, խորհրդատվական և ուսումնական ծառայությունների գնման նպատակով:

ՀՄԾ համակարգի ներդրման միջոցառումները հիմնականում, իրականացվել են ծրագրի 1-ին՝ **«Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին» բաղադրիչի շրջանակներում, որի ընդհանուր արժեքը կազմել է 3,921,501.95 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:**

Ծրագրի 4-րդ՝ **«Սոցիալական աջակցության բարելավում»** բաղադրիչի շրջանակներում 2 միջոցառումներ ևս ուղված են եղել ՀՄԾ համակարգի ներդրմանը, որոնց ընդհանուր գումարը կազմել է 94,741.75 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Նշված գումարները ծախսվել են՝ 1,822,300.4 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ շինվերանորոգման աշխատանքների, 1,932,216.34 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ տեխնիկական, ծրագրային միջոցների և կահույքի, 198,860.14 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ խորհրդատվական ծառայությունների, 62,866.78 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ ուսուցումների ձեռքբերման նպատակներով:

Ըստ այդմ, ծրագրի ընդհանուր գումարից 4,016,243.7 ԱՄՆ դոլարը, ուղակիորեն ծախսվել է Հայաստանում ՀՄԾ համակարգի ներդրման նպատակով:

Ծրագրի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Բաղադրիչ 1. Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին

1) ՀՀ- ում ՀՄԾ համակարգի կառուցվածքագործառնության մոդելի մշակում
2) Համալիր սոցիալական ծառայությունների 25 տարածքային կենտրոնների վերանորոգման և ինտերիեր դիզայնի նախագծերի պատրաստում, վերանորոգման տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացում

3) Համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնների վերանորոգում

4) Համալիր սոցիալական ծառայությունների 25 տարածքային կենտրոնների տեխնիկական ապահովում

5) Համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնների գույքային ապահովում

6) ՀՍԾ համակարգի տեղեկատվական ենթահամակարգի մշակում և ներդրում

Բաղադրիչ 4.Սոցիալական աջակցության բարելավում

1) Սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրման նպատակով սոցիալական աշխատանքի ոլորտի հետազոտություն և մասնագիտական բնութագրերի մշակում

2) Սոցիալական աշխատանքի ինստիտուտի ներդրման նպատակով Համալիր սոցիալական ծառայությունների 19 տարածքային կենտրոնների 354 աշխատողների վերապատրաստում:

Հայաստանում անհրաժեշտ է ստեղծել ևս 37 Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (2 միասնական ընդունարան), և համակարգի լիարժեք ներդրման համար կպահանջվի առնվազն 4 տարի և շուրջ 16 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ գումար: Այդ նպատակով ՀԲ-ի հետ քննարկումների ընթացքում ՀԲ-ն պատրաստակամություն է հայտնել 2014-2017թթ. ժամանակահատվածում սոցիալական պաշտպանության վարչարարության նոր ծրագրի համար հատկացնել շուրջ 18 մլն ԱՄՆ դոլար, որից շուրջ 13 մլն ԱՄՆ դոլարը կուղղվի ՀՍԾ համակարգի ներդրման (ամբողջացման) միջոցառումներին:

Նախնական քննարկումների ժամանակ ՀԲ-ի կողմից պատրաստակամություն հայտնվեց, մինչև հիմնական ծրագրի սկիզբը (2014թ.) ՀՀ ֆինանսների նախարարության դիմելու դեպքում հատկացնել կանխավճար, առաջիկա մեկ տարվա ընթացքում ծրագրի որոշ միջոցառումների իրականացման համար՝ ապահովելով ծրագրի շարունակականությունը:

Օրակարգի 2-րդ հարց

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ֆինանսավորման մոդելավորման խնդիրները

Ինտեգրված սոցիալական ծառայությունների (ԻՄԾ), ինչպես և այլ պետական ծառայությունների մատուցման մոդելի ընտրության ու նախագծման ընթացքում անհրաժեշտ է հստակ տարանջատում իրականացնել *պատվիրատուի* (ծառայության մատուցման համար վճարող/պատասխանատու մարմին) և *սեփականատիրոջ* (ծառայություն մատուցող) գործառույթների միջև և չգերադասել ու չպարտադրել ինստիտուցիոնալ առումով հարմար լուծումները գործառույթային լուծումների նկատմամբ: Այս մոտեցումը պետք է տեղավորվի Հանրային կառավարման և Հանրային ֆինանսների (բյուջետային) կառավարման մոդելներում: Հայաստանում որպես նշվածի գործող օրինակ կարող են հանդիսանալ դպրոցները, որոնց պարագայում ֆինանսավորման մոդելը տարանջատել է պատվիրատուի (ԿԳՆ) և սեփականատիրոջ (մարզպետարաններ) գործառույթները:

Ներկայումս գործող մոդելի աշխատանքը գործող միջավայրում խնդիրներ չէր առաջացնում քանի դեռ յուրաքանչյուր մարմին ուներ հստակ տարանջատված շահառուների և ծառայությունների մատուցման շրջանակ:

Հանրային կառավարման ու ֆինանսավորման մոդելները պետք է հարմարվեն շահառուին, այլ ոչ թե հակառակը: Ուստի, մոդելին պետք է հաղորդել լրացուցիչ ճկունություն, ներառյալ ֆինանսավորման առումով:

Սակայն, ՀՀ կառավարության կողմից 2012թ. հուլիսի 26-ին «Հայաստանի Հանրապետությունում Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ ներդնելու ծրագիրը հաստատելու մասին» ընդունված որոշմամբ Ծրագրի 6-15-րդ դրույթները ուղղակիորեն մատնանշում են համակարգին նախաձեռնողական և «հաճախորդի կարիքին համապատասխան ծառայությունների մատուցման» բնույթ տալու անհրաժեշտությունը:

Ցանկացած պարագայում, ԻՄԾ մատուցելու համար մի քանի տարբեր պատվիրատու ունենալու հանգամանքը պարունակում է լրացուցիչ ռիսկ՝ հոչակված նպատակներին հասնելու տեսանկյունից: Ինտեգրված ծառայություններ մատուցելու հարցում «մեկ պատվիրատու – երկու կատարող» մոդելի առկայությունն ունի էական առավելություն «երկու պատվիրատու – երկու կատարողի» համեմատությամբ:

Շահառու-պետություն հարթությունում ԻՄԾ մոդելը պետք է գործի այնպես, որ շահառուն «տեսնի» սոցիալական ծառայությունները միևնույն դեպք վարողի միջոցով և ծառայությունների փաթեթը ունենա ՄԵԿ պատասխանատու մարմին: Ուստի շահառուին մատուցվող առավել հարմարեցված ծառայությունների զամբյուղը պետք է կաշկանդված չլինի ինստիտուցիոնալ տարանջատումներով ու ֆինանսական համակարգի սահմանափակումներով:

Առաջարկվող մոդելի նկարագրություն

Առաջարկվող մոդելի կիրառումը ենթադրում է բյուջետավորման եղանակ, որը կաշկանդված չի լինի մոդելի ինստիտուցիոնալ լուծումներով թե՛ ստատիկ և թե՛ դինամիկ տեսանկյունից: Այսինքն, անգամ եթե որոշ ժամանակ անց որոշում կայացվի առանձին կառույցների ենթակայությունը տեղափոխել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) համակարգից դեպի մարզպետարաններ (կամ հակառակը), ամեն դեպքում ԱՍՀՆ-ն պիտի շարունակի հանդիսանալ ԻՄԾ տրամադրման համակարգի միասնական պատվիրատու:

Դա հնարավոր է իրականացնել անգամ, եթե ԻՄԾ համակարգման կամ այլ գործառույթի կատարողը հանդիսանա այլ պետական մարմնի աշխատող (իսկ հեռանկարում նաև ոչ պետական կառույց): Այս մոտեցումը Հայաստանում նույնպես ունի նախադեպ 2000-ական


Ծառայությունների ինտեգրումը (համակարգումը) բնակչությանը ինքնին ծառայություն է, որի համար նույնպես անհրաժեշտ են ռեսուրսներ և կառավարման համակարգ

թվականների սկզբում՝ ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության ծառայության և մի շարք պետական մարմինների միջև պայմանագրային (վարչական ակտի միջոցով) հարաբերություններ իրագործելու հարցում: Հանրային ֆինանսների դաշտում նույնպես ստեղծված է նման հարաբերությունների համար համապատասխան միջավայր: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 18-ի «ՀՀ պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N48 որոշման 34-րդ կետի համաձայն:

Ստորև ներկայացվող գծապատկերը նկարագրում է ֆինանսավորման հնարավոր լուծումը ԻՍԾ համակարգի արդյունավետ ներդրման համար: Համաձայն դրա, ԱԱՀ-ն հնարավորություն կունենա գործադրել իր «պատվիրատուի» գործառույթն անգամ այն պարագայում, երբ այն ուղղակիորեն չի կառավարում (չունի սեփականատիրոջ գործառույթ) ծառայություն մատուցողին: Մինչդեռ, այսօր կառավարման և ֆինանսավորման հոսքերը համընկնում են:

Նշված մոդելը կարող է կիրառվել ԻՍԾ կառավարման, իսկ ավելի ընդլայնված տարբերակով նաև «դեպքի վարման» և/կամ սոցիալական աշխատողի ծառայությունների պարագայում: Մոդելի կառավարումը ենթադրում է, որ ֆինանսավորումը պետք է իրականացվի «պայմանագրային» հիմունքներով, ինչը նշանակում է, որ ԻՍԾ համակարգման ծառայությունների համար պետք է որոշվի ծառայության միավորը (համակարգումը) և միավորի արժեքը: Պետական մարմինների միջև կնքվող վարչական ակտում պայմանագրի միավորը կհանդիսանա հենց կազմակերպության համակարգումը (դեպքի վարման պարագայում միավոր կհանդիսանա դեպքերի քանակը՝ ըստ դեպքերի բարդության աստիճանի):

Գծապատկեր 1 Կառավարման ու ֆինանսավորման հոսքերը առաջարկվող մոդելում (ընդլայնված տարբերակ)



Ցանկացած տարբերակի ընտրության դեպքում բարեփոխման էությունից բխում է ԱԱՀ կողմից պատվիրատուի գործառույթի ստանձնման անհրաժեշտությունը: Նշվածը բխում է նրանից, որ համաձայն իր առաքելության, ԱԱՀ-ն պատասխանատու է սոցիալական ոլորտում հաջողությունների և անհաջողությունների համար և այն դեպքերում, երբ ԱԱՀ-ն հանդիսանում է նաև որոշ պետական մարմնի անմիջական ղեկավար կառույց «սեփականատեր» և՛ այն դեպքերում, երբ դա այդպես չի: Այսինքն, առաջարկվող մոդելի կիրառման պարագայում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման պատվիրատու կհանդիսանա ԱԱՀ՝ ապահովելով դրանով ծառայությունների ինտեգրման կարևոր բաղադրիչ:

Առաջարկվող մոդելն ունի ևս մի էական առավելություն: Այն է, ԻՍԾ համակարգում ներդնել միավորի արժեքով ֆինանսավորում, որը բյուջետային (գանձապետական) համակարգում կարտացոլվի տնտեսագիտական դասակարգման մեկ տողով («ապրանքների ու ծառայությունների ձեռք բերում»): Սա էականորեն կբեռնաթափի ծառայություն մատուցողին տողային ֆինանսավորման հոգսերից,

որոնց պարագայում տնտեսագիտական դասակարգման տարբեր տողերի միջև վերաբաշխումներն այլևս չեն հանդիսանա գանձապետական համակարգի բաղկացուցիչ մաս և չեն ենթադրի վերադասի նախնական վերահսկողության (*ex ante*) խիստ ռեժիմի կիրառում: Ընդ որում, ԻՍԾ համակարգի *ex post* վերահսկողության համակարգերի ներդրումը ու զարգացումը (մշտադիտարկում և ներքին աուդիտ) չի թուլացնի իրական վերահսկողությունը, սակայն միաժամանակ էականորեն կավելացնի կառույցի ճկունությունը, ինչը ԻՍԾ պարագայում պարտադիր պայմաններից է: Հարկ է նշել, որ ինչպես և հանրակրթության բնագավառում, մեկ տողով ֆինանսավորումը չի ենթադրում տնտեսագիտական դասակարգման տողային տեղեկատվության վերացում:

ԻՍԾ համակարգի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է իրականացնել գնահատման և մշտադիտարկման գործառույթներ: ԻՍԾ համակարգի ներդրումը պայմանագրային (պալիրատուի) սկզբունքներով ենթադրում է պատվիրատուի կողմից նաև՝ տրմադրված սոցիալական ծառայությունների քանակի, որակի, արդյունավետության գնահատման համակարգի ներդրում: Այսինքն, ԱՍՀՆ կողմից վճարվող գումարների դիմաց ԻՍԾ համակարգը պետք է հաշվետու լինի մատուցված ծառայությունների որակի համար: Սա նշանակում է, որ ԱՍՀՆ պետք է մշակի ցուցանիշների ու դրանց հավաքագրման համակարգ, որը թույլ կտա մշտադիտարկման միջոցով բացահայտել համակարգում տեղ գտած խնդիրները, ինչպես նաև հորիզոնական համեմատությունների իրականացման միջոցով բացահայտել առավել թերի աշխատող ԻՍԾ կառույցները:

ՄԺԾԾ գործընթացում ֆինանսավորման մոդելի արտացոլումը

ԱՍՀՆ կողմից առաջարկվող մոդելի հավանության պարագայում 2014-2016թթ. ՄԺԾԾ գործընթացում արտացոլելը հետապնդում է հետևյալ նպատակները.

1. ՄԺԾԾ Բարձրագույն Խորհրդի կողմից հավանություն ստանալ ԱՍՀՆ և այլ պետական մարմինների միջև ԻՍԾ համակարգի գործարկման ժամանակ կիրառել պայմանագրային հարաբերությունների մոդելը
2. Հայեցակարգային մակարդակով ամրագրել ԻՍԾ փաթեթային մոտեցումը և ԱՍՀՆ (որպես ամբողջական փաթեթի պատվիրատուի) լիազորություններն այդ հարցում:
3. Ամրագրել ԻՍԾ համակարգումը և դեպքի վարումը որպես առանձին ծառայություններ ԻՍԾ համակարգում:
4. Մոտեցնել ԻՍԾ ֆինանսավորման համակարգը հռչակված ծրագրային բյուջետավորման սկզբունքներին, այն է անցում կատարել ԻՍԾ համակարգում միավորի արժեքով բյուջետավորման սկզբունքին՝ ԱՍՀՆ վերապահելով միավորի և դրա արժեքի որոշման գործառույթը
5. Հիմք պատրաստել 2014թ. բյուջեի մանրակրկիտ պլանավորման փուլում մարզպետարանների ու համայքների հետ համատեղ հաշվարկներ իրականացնել գործածության ժամանակ բյուջետային հոսքերի վերաբաշխման և բյուջեների հստակ պլանավորման համար: